ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ ԵՆ ԱՅՑԵԼԵԼ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

05.05.2023 17:36

Հայաստանի Հանրապետության Փաստաբանների պալատը դարձյալ հյուրընկալել է ապագա իրավաբանների:

Այս անգամ Պալատ են այցելել Ոստիկանության ակադեմիայի ուսանողները:

Նրանց ողջունել է Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը, խոսել փաստաբանների գործունեության, արդարադատության համակարգում նրանց դերի մասին:

Ուսանողների հետ զրուցել է նաև Փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավար Լուսինե Սարգսյանը, այնուհետև հյուրերին անմիջականորեն ծանոթացրել Փաստաբանների պալատի աշխատանքային պայմաններին:

Պալատում առաջին անգամ հյուրընկալված ուսանողներին նաև հնարավորություն է ընձեռնվել այցելել Փաստաբանական ակադեմիա և Հանրային պաշտպանի գրասենյակ:

Լուսինե Սարգսյանը ուսանողներին ներկայացրել է Փաստաբանական ակադեմիա ընդունվելու կարգը, ուսումնական գործընթացը, դասավանդման մեթոդները և այլ կարևոր դրութներ:

Հանրային պաշտպանի գրասենյակում ուսանողների դիմավորել է գրասենյակի ղեկավարի տեղակալ Թամարա Բաղդասարյանը, ներկայացրել հանրային պաշտպանի դերն ու գործառույթները, ինչպես նաև պատասխանել ուսանողներին հուզող հարցերին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ











BACK $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })